



Ազդարարութեան Փող

Trumpet's Sound

39-ՐԳ ՏԱՐԻ, ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2008

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիտնիի Հայ Աւետարանական Եղբայրներու Եկեղեցիի հրատարակութիւնն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիւ Հրաչ Գույունեան:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

«Վասն զի Տէրը ինք ազդարարութեան
հրամանով, հրեւակաղեսին ձայնովը
ու Ասուծոյ փողովը երկինքն ուրիշ
իջնէ»: Ա Թես. 4:15

For the LORD HIMSELF will descend
from heaven with a cry of command,
with the Archangels call, and with
the sound of the Trumpet of God.
1 Thess. 4:16

Արևածաղիկ



«Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւաքքի միջոցով եւ այս՝
նչ թէ ձեզմէ է, հապա Ասուծոյ քարգէւն է» (Եփես. 2:8):



Հայ Աւերաբանական Եղբայրներու Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHING BY THE
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.armenianbrethren.org

Կազմի նկարի լուսանկարիչ՝ Երբ Մահարեան (Սիւնիք, Յունիս 2000 թ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աստուծոյ սեփական ժողովուրդը. Հովիւ՝ Հրաչ Գույուճեան

Փոխաւոճ կեանքեր. Սիհրան Ներսիսեան

Անյարգալից վերաբերմունք մեծերու հանդէպ Մանկանց աւետ. ընկ.

Քու թէ՞ Աստուծոյ բարութիւնը. Հովիւ՝ Հրաչ Յակոբեան

Տասը պատուիրանները (9) Հովիւ՝ Հրաչ Գույուճեան

Յաւիտեան մտերիմ ընկեր. Սիւզան Խաչոյեան

Յարատուութիւն (5) Տօքթ. Արմէն Կազաւեան

Հարցազրոյց Հրաչ Յակոբեան եղբօր հետ. Վարդան Սարգիսեան

Աստուծոյ սեփական ժողովուրդը

Սիրելիներ Քրիստոսով, մեր հաւատարիմ ընթերցողներուն: Գործողութիւնէս վերջ հանգիստի պատճառով տունը կը մնամ: Շնորհակալ եմ այն բոլորէն, որոնք աղօթեցին ինծի համար, Տէրը օրինէ ձեզ բոլորիդ: Թէպէտև դարմանումս երկար պիտի տևէ, բայց Տէրոջը աջը միշտ իմ վրաս է ձեր աղօթքներուն շնորհիւ. շնորհակալ եմ ձեր բոլոր նամակներուն համար:

Մարմնական բոլոր տկարութիւններուս մէջ, միայն Աստուծոյ ձեռքերուն մէջ ապահով կը զգամ: Առաւօտները միշտ երգով կ'արթննամ, բայց այս առաւօտ մէջս երգ չկար, մեծ ծառաւ մը կար Աստուծոյ ներկայութեանը: Երբ Տէրը Իր Խօսքով մօտեցաւ ինծի ու Իր ուրախութեամբ լեցուց, ես զիս ապահով զգացի: Այս Հոգիին գործն է մեր կեանքերէն ներս: Ականջիս այս խօսքերը կը դողար. «Բայց դուք սեփական ժողովուրդ էք»: Ուզեցի շուտով համարը գտնել, որ Տէրոջը միտքը յստակ ըլլար ինծի համար: Ա Պետ. 2:9 համարն էր:

«Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ մը, որպէս զի հռչակէք անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն Իր սքանչելի լոյսին կանչեց»:

Բայց դուք ընտիր ցեղ մըն էք: Առաքեալը կը խօսի հաւատացեալներուն՝ անոնց որոնք Տէրը ընդունեցին: Թէպէտև աշխարհ շատ ցեղեր ունի, բայց Աստուած մեզ Քրիստոսով Իրը ըրաւ, Ան մեզ ընտիր կ'անուանէ: Ալ մենք խոզերու նման ցեխերու մէջ չենք տապալակիր, ալ մենք մեր անցեալի սովորութիւններուն մէջ չենք ապրիր՝ մեղքի մէջ խեղդուած, Ան մեզ համար արեան գին մը վճառեց, Քրիստոսով մենք նոր եղանք և Աստուծոյ համար ընտիր ցեղ մըն ենք Իրեն փառք բերելու համար:

Թագաւորական քահանայութիւն: Անցեալին չարին գերիներ, բայց այսօր Քրիստոսով ազատ արձակուած: Աստուած մեզ կը տեսնէ իբր Իր քահանաները երկրի վրայ, քահանաներ, որոնք սուրբ ձեռքեր կը բարձրացնեն Տէրոջ, քահանաներ խօսքը սորուելով կը քաջալերենք մէկս միւսին: Ով սիրելի հաւատակից ընկերս, այս խաղաղութիւնը Տէրը Ինք քեզ կուտայ Իր Հոգիով, և դուն Տէրոջ առջև մեծ պատասխանատուութիւն մը ունիս, ապրելու սուրբ կեանքը և հետևելու Իր խօսքերուն

Սուրբ ազգ: Այո և ամէն: Ո՞վ է այս սուրբ ազգը, եթէ ոչ ամէն անհատ որ

Քրիստոսի արհունէն անցաւ, Անոր հաւատաց, փրկութիւն ստացաւ, մեղքերու թողութիւն ընդունեց, վերստին ծնաւ, ջուրով և Հոգիով մկրտուեցաւ: Այդ սիրելիս, ոչ թէ մենք անարժաններս, հապա Աստուծոյ շնորհքը մեզ ըրաւ և այս բոլորին վրայ Տէրը մեզ սուրբ ԱԶԳ կ'անուանէ, ալ ոչ արաք, հրեայ, ռուս, այլ Իր ժողովուրդը, անոնք որոնք երկրի վրայ չխառնուեցան և իրենց հանդերձները սուրբ և մաքուր պահեցին Աստուծոյ փառքին համար:

Սեփական ժողովուրդ: Լաւ նայէ թէ Տէրը ինչ կ'ըսէ քեզի, կրկին անգամ մը կարդայ. Իմ ես, Իմ ժողովուրդս էք, վերի բաները մտածեցէք, և ալ ձեր սրտերը այս աշխարհին մի կապէք, անոր հարստութեան, անոր սուտ հաճոյքներուն, անոր փառքին, մենք կրնանք խաբուիլ, մոռնալ թէ Իր սեփական ժողովուրդն ենք, մենք ճամբորդներ ենք երկրի վրայ ժառանգելու Անոր փառքը երկնքի մէջ:

Հոչակենք Անոր առաքինութիւնները: Տէրը սիրելիս Իր բոլոր զաւակներուն պարզներ կը նուիրէ, որ մենք գործենք Իրեն համար, ծառայենք մեր շուրջիներուն, օգնենք իրենց, պատմենք անոնց այն ուրախութեան համար որ ունինք մեր սրտերուն մէջ: Տէր Յիսուս գնաց փնտռելու կաղերը, կոյրերը, մեղատրները, անոնց քաջալերելու, մխիթարելու և փրկութեան առաջնորդելու. մենք ալ իբր զաւակներ հաւատարիմ մնանք մեր կոչումներուն մէջ առանց թոյլնալու միշտ գործենք Տէրոջը համար:

Որ ձեզ խաւարէն Իր սքանչելի լոյսին կանչեց: Բոլորս ալ կը յիշենք մեր խաւարին օրերը, սատանային ճիրաններուն մէջ, անյոյս, մեղաւոր, մոռցուած, և լքուած, թափառական, բայց Անոր սքանչելի լոյսը մեզ հանեց այս փոսին մէջէն: Մենք լոյսի որդիներ ենք, ծածուկ բան չունինք, սրտերնիս բաց ու մաքուր է, Անոր խաղաղութեան մէջ կ'ապրինք, բայց օր մը բոլորս այս սքանչելի լոյսին դէմ առ դէմ պիտի տեսնենք և մեր յաւիտենականութիւնը Իր հետ պիտի անցնենք:

Եկէք Տէրոջը լոյսովը քալենք կ'ըսէ Աստուծոյ խօսքը: Տէրն ալ ձեզ օրհնէ, զօրացնէ և գիտնանք որ բոլորս ալ պատերազմակից ենք Աստուծոյ բարի պատերազմը պատերազմելու չարին դէմ, և Տէրն ալ մեզ պահէ, որ Իր Սուրբ պսակներուն արժանանաք:

Անոր շնորհքը և խաղաղութիւնը ձեր հետ:

Հովիտ՝ Հրաչ Գույուճեան



Փոխուած կեանքեր

Լեանքը լի է դժուարութիւններով: Բոլոր մարդիկ կը ցանկանան ազատուիլ ատոնցմէ և աւելի դիրքին կեանք մը վարել: Թէև մեզմէ շատերը կը հասցնին կեանքի որոշ բարձունքի մը, սակայն այնուամենայնիւ կը զգանք, թէ ինչ որ բան պակաս է: Բոլորիս մէջ կայ բանի մը պակասութիւնը: Բան մը կ'ուզենք, բայց չենք գիտեր ինչ: Ես ալ կ'ուզէի հասկնալ թէ ինչ է այդ պակասութեան լուծումը: Ձիւնորական ծառայութեան ժամանակ, շատ ազատ պահեր կ'ունենայի և կը սկսէի մտածել իմ կեանքիս մասին: Ի՞նչ պէտք է ըլլայ ինձի, ի՞նչ կը սպասէ ինձի ապագային, ի՞նչ ընեն որ իմ կեանքս աւելի ուրախ և լաւ ըլլայ: Ժամեր կ'անցնէի թերթեր և գիրքեր կարդալով՝ փորձելով իմ հարցերու պատասխանները գտնել գրականութեան մէջ: Բայց բոլոր ջանքերս ապարդիւն եղան: Շատ անգամ կը թուար թէ իմ հարցերու պատասխանները գտեր եմ, բայց կարճ ժամանակ մը անցնելէ ետք ես նորէն կը դառնայի այդ նոյն վիճակին: Հարցեր և ոչ մէկ պատասխան: Եւ այսպէս միշտ փնտռտուքի մէջ էի, կը նայէի երկնքի աստղերուն և կը մտածէի թէ այսքանի մէջ ո՞ր է Աստուած, և ինչ կ'ուզէ ինձմէ: Նոր Կտակարանը կը կարդայի և բան մը չէի հասկնար, միայն կը զգայի որ ինչ որ փոփոխութիւն մը կ'ըլլար մէջս:

Երբ որ զինուորական ծառայութիւնէն վերադարձայ տուն, սկսայ եկեղեցի յաճախել: Շատ յաճախ կը հիասթափուէի, երբ մարդկանց կը նայէի, բայց ամէն անգամ կարծես ինչ որ մէկը կը ստիպէր զիս որ նորէն երթամ: Եւ օր մը հասկցայ թէ ես իմ ամբողջ կեանքիս մէջ Աստուծոյ կը փնտռէի, բայց չգիտնալով թէ ուր է և ինչ կ'ուզէ ինձմէ: Ծանօթացայ եկեղեցի յաճախող երիտասարդներու հետ և իմացայ ապաշխարութեան և յալիտենական կեանքի մասին: Հասկցայ թէ ինչ ըրած է Յիսուս Քրիստոսը ինձի համար: Որոշեցի և իմ ամբողջ կեանքս նուիրեցի Իրեն: Չէ որ Ան Իր կեանքը չխնայեց և մեզ համար տուաւ, որ մենք կարողանանք ազատուիլ այս աշխարհի մեղքէն և Իր հետ երջանիկ ապրիլ: Այժմ Յիսուսի ներկայութիւնը իմ կեանքիս մէջ բերեր է մեծ խաղաղութիւն: Շատ սքանչելի և հրաշալի է, որ գտեր եմ Յիսուսին և գիտեմ թէ երբ հրաժեշտ տամ այս կեանքին երկնքի արքայութեանը մէջ պիտի ըլլամ իմ Աստուծոյս հետ միասին: Գիտեմ որ ոչ թէ ես գտայ Ձիւնք, այլ Ինք եկաւ ու գտաւ զիս:

Միհրան Ներսիսեան

Խնդիրներ, որոնց կը բախուին մանուկները

Անյարգալից վերաբերմունք մեծերու հանդէպ

Ներկայ երիտասարդութեան բնորոշ գիծերէն մէկը մեծերուն հանդէպ կոպիտ և անյարգալից վերաբերմունքն է: Պօղոս Տիմոթէոսին կը գրէ ըսելով. «Գիտցիր թէ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան, վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ...» (Բ Տիմ. 3: 1-2):

Այսօր շատ ծնողներ ցառք կը նշեն թէ անկարգապահութիւնը լուրջ խնդիր մը դարձած է: Տուներուն մէջ կարգապահութեան բացակայութիւնը մեծապէս կը նպաստէ յանցագործութեան աճին: Կարևոր է հասկնալ այն պատուիրանը, որ Տէրը տուեր է բոլորին, յատկապէս՝ մանուկներուն. «Պատուէ՛քու հօրն ու մօրը...» (Ելից 20:12) և «Որդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէ՛ք Տէրոջմով...» (Եփես. 6:1): Մանուկներուն համար կենսականօրէն անհրաժեշտ է ծնողներու հեղինակութիւնը, որը տրուած է Տէրոջ կողմէն: Եթէ այդպէս չըլլայ, ապա պատանիները չեն յարգեր իրենց ծնողներուն, դպրոցի ուսուցիչներուն, ուրիշներու սեփականութիւնը, ինչպէս նաև պետութեան օրենքները և այլն: մանուկի սրտին մէջ կայ ինչ որ բան, որը կը ստիպէ զինք չհնազանդիլ:

Ծնողներ, չբարկանալով, այլ՝ սիրով օգնէ՛ք ձեր զաւակներուն՝ ենթարկուելու (Եփես. 6:4): Ցանկացած մարդկանց խումբի համար, որպէսզի այն կարողանայ գործել, անհրաժեշտ է պատասխանատուութիւններու բաժանում և որևէ մէկի հեղինակութեան ճանաչում: Աստուածաշունչը կ'ըսէ. «Չայն որ կայսրիսն է՝ կայսրիսն տուէք և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք»: «Ուստի հնազանդ եղէք ամէն մարդկային հեղինակութեան Տէրոջը համար...» (Ա Պետ. 2:13):

* Կը խնդրենք աղօթել՝ Հոկտեմբեր ամսուն «Հրաշալի հաղորդակցութիւն գիրք 2»-ի տպագրութեան համար:

Մանկանց անտարանչութեան ընկերակցութիւն

Քու թէ՛ Աստուծոյ բարութիւնը

«Ու իր մէջ գրկուիմ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ՝ որ օրէնքէն է, հասպա Քրիստոսին հաւաւրքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէն է հաւաւրքով» (Փիլիպպեցիս 3:9):

Պօղոս առաքեալը այս համարին մէջ կը նկարագրէ երկու տարբեր տեսակի արդարութիւն (կամ բարութիւն): Մէկը՝ օրէնքին յենուած մարդկային բարի գործերու վրայ հիմնուած է, իսկ միւսը՝ Աստուծմէ է և հիմնուած է Քրիստոսի վրայ եղած հաւատքի: Առաքեալը կը փափաքի ունենալ երկրորդը և ոչ թէ առաջինը, որովհետև մարդու արդարութիւնը իր գործերու վրայ հիմնուած՝ անօգուտ է: Ամբողջ Աստուածաշունչի գլխաւոր պատգամը այն է, որ մարդկային բարութիւնը ոչ մէկ արժէք կը ներկայացնէ և չի կրնար Աստուծոյ առջև արդարացնել մարդուն, և որ բոլոր մարդկութիւնը Տէրոջ առջև դատապարտուած է և արժանի է Անոր դատաստանին:

Արդեօ՞ք բոլորն ալ դատապարտուած են: Արդեօ՞ք ընկերութեան մէջ յարգուած անձ մը, որը կը ջանայ օրինակելի քաղաքացի ըլլալու համար իր լաւագոյնը ընել, միաժամանակ լաւ հայր և ամուսին մը ըլլալով նոյնքան դատապարտելի է ինչքան սովորական մարդասպան մը: Արդեօ՞ք Պօղոս առաքեալը և ոճրագործ մը հաւասարապէս պարտաւոր են Աստուծոյ առջև և անկարող Անոր փրկութեան պահանջքները գոհացնելու: Այս երկու հարցերուն պատասխանն է՝ այո: Այս է ճիշդ այն պատճառը թէ ինչու առաքեալը վերը նշուած համարին մէջ կը փափաքի ունենալ արդարացում մը, որը հիմնուած չէ իր գործերուն վրայ, այլ արդարացում մը որը կուգայ Աստուծմէ: Մարդոց մեծամասնութիւնը պիտի չընդունին այս, և այս պատճառով Աստուածաշունչը մեզ կը ներկայացնէ թէ ինչու մարդկային բարութիւնը երբեք չի կրնար հաճեցնել կամ գոհացնել Աստուծոյ: Հռովմայեցիս թուղթի առաջին գլուխներուն մէջ կը ներկայացուի երեք խումբի մարդիկ, որոնք կը ներկայացնեն ամբողջ մարդկութիւնը: Այս երեք խումբերն ալ կարիք ունին Աստուծոյ արդարութեանը, այլապէս պիտի մնան դատապարտուած Տէրոջ առջև (Հռովմ.1:18-2:29):

Առաջին խումբ՝ նիւթապաշտ մարդը (Հռովմ. 1:18-32):

Այս խումբին պատկանող մարդը ունի հաղորդակցութեան իր սեփական չափանիշները, ան կ'որոշէ իր բարոյական չափանիշները և գործնականօ-

րէն Աստուծոյ դուրս կը հանէ իր կեանքէն: Այն անձի սիրտը որ կ'ապրի միայն իր համար և իր չափանիշներու համաձայն խաւարած կ'ըլլայ, և աւելի ու աւելի կը հեռանայ Աստուծմէ և աւելի կը սուզուի խաւարի մէջ: Անոնք կը մերժեն Աստուծոյ, և զինք կը փոխարինեն կուռքերու հետ, և որպէս արդիւնք Աստուած թոյլ կուտայ անոնց որ հետևին իրենց մեղատոր կիրքերուն և այսպիսով աւելի մեծ դատապարտութիւն կը բերեն իրենց անձերուն վրայ:

«Թէև իրենք Աստուած կը ճանչնային բայց Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան, հապա իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան և սրտերնին անմտութեամբ խաւարեցաւ: Իրենք իմաստուն ենք ըսին ու յիմարացան և անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին, նմանցնելով եղծանելի մարդու և թռչուններու ու չորքոտանիներու և սողուններու պատկերին: Անոր համար Աստուած ալ պղծութեան մատնեց զանոնք իրենց սրտերուն ցանկութիւններովը՝ իրենց մարմինները իրենց մէջ անարգելու» (Հռովմ. 1:21-24):

Երկրորդ խումբ՝ բարոյական մարդը (Հռովմ. 2:1-16):

Երկրորդ խումբին պատկանող մարդը կ'ապրի բարոյական բարձր կեանքով մը: Այն այնպիսի անձ մըն է, որ առաջին խումբի մարդոց կ'ըսէ. «Ես ձեզ նման չեմ, ես ունիմ բարոյական բարձր չափանիշներ, և ես իմ լաւագոյնս կ'ընեմ անոնցմով ապրելու համար, ուստի ես դատապարտուած չեմ»: Աստուածաշունչը մեզ կ'ըսէ թէ ան նոյնպէս դատապարտուած է երկու պատճառներու համար: Նախ և առաջ, նշանակութիւն չունի թէ ինչ են իր չափանիշները, ատոնք թերի են և պակաս Աստուծոյ չափանիշներէն, և երկրորդը, բարոյական անձը չի կրնար ամէն ժամանակ իր չափանիշները պահել, ուստի ինք՝ իր իսկ դրած չափանիշները պիտի չկրնայ լիովին պահել: Զգոյշ եղիր երբ քեզի համար չափանիշ մը կը դնես ու կ'ըսես որ ասորմով պիտի ապրիս: Դուն պիտի դատուիս ճիշդ այն չափանիշի համաձայն, որով դուն քեզի համար նշանակած էիր:

Երրորդ խումբը՝ կրօնական մարդը (Հռովմ. 2:17-29):

Այս խումբին պատկանող մարդը նման չէ առաջին և երկրորդ խումբի մարդկանց: Ան որոշակի կրօնական համոզումներ ունի, ան կը հաւատայ որ Աստուած գոյութիւն ունի, ան թերևս մկրտուած և եկեղեցիի անդամ ըլլայ, ան թերևս կը հետևի եկեղեցական որոշ ծիսակատարութիւններու և տօնացոյցերու, ան թերևս եկեղեցի յաճախող ըլլայ, բայց ան նոյնպէս դատապարտուած է, քանի որ Աստուած կը նայի մարդու սրտին և ոչ թէ միայն մեքենայացուած արարողակարգերու: Առանց փոխուած սրտի կրօնական ծիսակատարութիւններուն հետևիլը անօգուտ է: Անձը կրնայ մկրտ-

ուած ըլլալ, բայց եթէ չունի նորոգուած սիրտ մը, ան նոյն հին անձն է: Այս անձը աւելի բարեպաշտ կրնայ թուալ, եթէ համեմատելու ըլլանք միւս երկու խումբի մարդկանց հետ, բայց Տէրը կը նայի սրտին և կը տեսնէ ներքին մարդը: Եթէ այս անձը պարկեշտ գտնուի, պիտի խոստովանի որ Աստուծոյ օրէնքները պահելով արդարանալ փորձելը աւելի ու աւելի ցոյց կուտայ ու մէջտեղ կը հանէ իր մեղաւոր բնոյթով ըլլալը: Պօղոս առաքեալը այսպիսին էր, ան Հռովմ. 7:21-24 կը յայտարարէ ըսելով. «Ուստի ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ բարին ընել կամենամ, չարը իմ քովս կ'ըլլայ: Վասն զի ներսի մարդուն նայելով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ. բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներու մէջ, որ իմ մտքիս օրէնքին դէմ կը պատերազմի և զիս գերի կ'ընէ մեղքի օրէնքին, որ իմ անդամներու մէջ է: Ի՛նչ խղճալի մարդ եմ ես. ո՞վ պիտի ազատէ զիս այս մահկանացու մարմնէն»:

Բոլոր այս երեք խումբի մարդիկ դատապարտուած են: Աստուածաշունչի բարի լուրը այն է, որ ինչ որ անկարելի էր մարդու համար որ կատարէր, Աստուած Ինք արդէն կատարեց Տէր Յիսուս Քրիստոսի շնորհիւ, առանց որ-կէ մարդկային գործի միջամտութեամբ: «Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, թէև օրէնքն ու մարգարէները կը վկայեն թէ Աստուծոյ արդարութիւնը Յիսուս Քրիստոսին հաւատքէն է որ բոլոր հաւատացողներու վրայ կ'ըլլայ, քանզի խտրութիւն չկայ: Վասն զի ամենքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան. Բայց անոր շնորհքով և Քրիստոս Յիսուսով եղած փրկութիւնով ձրի կարդարանան» (Հռովմ. 3:21-24):

Մարդու արդարութիւնը, ով որ ըլլայ և ինչ գործ ըրած ըլլայ, երբեք չի կրնար Աստուծոյ արդարութիւնը գոհացնել: Առանց Տէր Յիսուս Քրիստոսի կատարած գործի, մարդը կորսուած է և դատապարտուած սուրբ և արդար Աստուծոյ առջև: Միակ արդարութիւնը, որ ընդունելի է Աստուծոյ մօտ Տէր Յիսուս Քրիստոսով եղած արդարութիւնն է: «Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն» (Հռովմ. 8:1):

Միրելի՛ ընթերցող, եթէ մինչև օրս կը կրթնէիր քու անձնական արդարութեանդ վրայ մտածելով որ այդպէս ընդունելի կ'ըլլաս Աստուծոյ մօտ, դուն չարաչար սխալած ես: Տէր Յիսուս Քրիստոսը պատրաստ է տալ քեզ Իր արդարութիւնը որպէս պարգև, դուն պէտք է այդ ընդունիս հաւատքով: Պարզ աղօթքով Աստուծմէ խնդրէ Իր ներումը և խնդրէ որ քեզի տայ Քրիստոսի արդարութիւնը:

Հովիւ՝ Հրաչ Յակոբեան

Տասը պատուիրանները

9) «Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ»:

Երբ կ'ուզենք տեսնել թէ ի՞նչ է սուտը և ուր ծագում առաւ, պիտի տեսնենք թէ առաջին ծագումը Եդեմի պարտէզին մէջ էր, երբ օձը Ադամին ու Եւային խաբեց: Բայց ո՞վ էր օձը, եթէ ոչ՝ սատանան ինք: Մենք գիտենք որ Աստուած ճշմարիտ ու արդար է, բայց չարը՝ սատանան այդ ստախօսն է, որ կ'ուզէ մոլորեցնել մարդ արարածին:

Ինչքան սարսափելի բան է, երբ մարդիկ այս մեղքով խաբուած իրենց ամէն մէկ խօսքը սուտերով լեցուած կ'ըլլայ, անոնք կ'ըլլան սատանայի գերիւնէրը՝ կապուած անոր կապանքով: Թերևս ըսես. «Հրաչ եղբայր, կրնա՞յ մարդ ապրիլ առանց սուտ խօսելու այս աշխարհին մէջ»: Ես ալ քեզի պիտի ըսեմ թէ միլիոնաւոր հաւատացեալներ աշխարհի շուրջ այս բարի պատերազմը կը պատերազմին ամէն օր՝ տան մէջ, գործի մէջ, առևտուրի ժամանակ, անոնք կը պատերազմին չարին դէմ, և չեն ուզեր որ չարը իշխէ իրենց վրայ:

Սուտ խաբելը մեղք է Աստուծոյ դէմ: Ստախօսներ սատանային հետևորդները և անոր կամքը կատարողներն են: Ստախօսներ երկինք պիտի չմտնեն կ'ըսէ Տէրոջ խօսքը:

- Ինչպէ՞ս կրնաս քեզ ծնանող մայրիկիդ աչքերուն նայելով սուտ խօսիլ:
- Ինչպէ՞ս կրնաս քեզ ծառայող սիրող կնոջդ աչքերուն նայելով սուտ խօսիլ:
- Ինչպէ՞ս կրնաս քու զաւակներուդ, որ դուն մեծցուցիր սուտ խօսիլ:
- Ինչպէ՞ս կրնաս մտերիմ ընկերներուդ աչքերուն նայելով սուտ խօսիլ:
- Ինչպէ՞ս կրնաս դատաւորին աչքերուն նայելով սուտը շարունակել:
- Ինչպէ՞ս կրնաս ստել և գողնալ կառաւարութենէն, չէ՞ որ կառաւարութիւնները Տէրը մեր վրայ կը դնէ և մեզմէ լման հնազանդութիւն կը պահանջէ անոնց հանդէպ: Յիսուսի օրինակը շատ գեղեցիկ էր, երբ լուսնն առնելով ըսաւ. «Որո՞ւն պատկերը կայ վրան», ուստի «Կայսրինը կայսրին տուէք»:

Մենք իբր հաւատացեալներ պէտք է որ փոխուինք մեր մարդկային համոզմունքներէն, հասկացողութիւններէն և ընդունինք Տէրոջը Խօսքը կատարելապէս մեր կեանքերէն ներս, որ ըլլանք Աստուածահաճոյ և բարեպաշտ

մարդիկ, գիտնանք թէ երբ մենք Տէրը կ'ընդունինք Ան իր գեղեցիկ գործը կը սկսի մեր կեանքերէն ներս, և հին մարդը իր խաբեբայ և չար սովորութիւններէն դուրս կուգայ և լման նոր կ'ըլլանք Տէրոջ փառքին համար, ուստի Ձեր «այո»-ն այո ըլլայ և «ոչ»-ը ոչ: Գնա՛ և ալ մեղք մի գործեր (սուտ մի խօսիր):

Հովիւ՝ Հրաչ Գոյոյունեան
(Շարունակելի)



Յաւիտեան մտերիմ ընկեր

«Եղբօրմէ աւելի հաստատ բարեկամ կայ» (Առակաց 18:24):

Կը յիշե՞ս մանկական օրերդ. «Յաւիտեան մտերիմ ընկեր»-դ այն պզտիկ աղջիկն էր, որու հետ պուպրիկով կը խաղայիր: Կը յիշե՞ս երկրորդական դպրոցական օրերդ. «Յաւիտեան մտերիմ ընկեր»-դ այն պատանուհին էր, որու հետ ժամեր կ'անցընէիր սրտիդ գաղտնիքները պատմելով: Կը յիշե՞ս պսակի օրդ. «Յաւիտեան մտերիմ ընկեր»-դ այն անձն էր, որ քու քովդ կեցած էր որպէս հարսնաքոյր:

Գիտե՞ս ուր են այն բոլոր ընկերուհիներդ հիմա, անոնք՝ որոնց մասին կ'ըսէիր թէ քու յաւիտեան մտերիմ ընկերներդ էին: Հաւանաբար ոչ: «Յաւիտեան մտերիմ ընկեր» տիտղոսը միայն կրնայ մէկ անձի մը տրուիլ առանց վարանելու: Այդ անձը Յիսուսն է: Մենք միշտ գիտենք Ան ուր է, որովհետև Ան միշտ մեր քովն է: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ թէ Ան եղբօրմէ մը աւելի մօտ բարեկամ մըն է: Ան կ'ուզէ որ մենք Իրեն հաւատանք, վստահինք և Իր հետ քալենք:

Որևէ մէկու հետ մտերմանալու համար հարկ է իրարու հետ ժամանակ անցընելը: Մեզի համար շատ հաճելի է մեր բարեկամուհիներուն հետ շուկայ երթալը, սուրճի կամ ճաշի համար ժամադրուիլը, խօսիլ ու խնդալը: Նոյնը կրնա՞ս ըսել Յիսուսի համար: Իր հետ ժամանակ անցնելը հաճելի՞ է քեզի համար: Իր հետ ամէն օր ժամադրութիւն ունի՞ս: Յիսուս քեզի համար «Յա-

լիտեան մտերիմ ընկեր» է՞ կամ թէ միայն Կիրակիէ Կիրակի հանդիպող ընկեր մը: Եկուր ուխտենք այսօր աւելի մտերմանալու Անոր հետ: Եկուր ժամ դնենք, որ մեր յարաբերութիւնը աւելի սերտ ըլլայ Անոր հետ: Եկուր որոշենք, որ ամէն օր կարճ դադար մը պիտի առնենք մեր առօրեայ գործերէն և պիտի երթանք անկիւն մը՝ առանձնանալու Իր հետ:

Որպէս կին և մայր, ես գիտեմ որ շատ պարտականութիւններ ունիմ, ուրեմն անոր համեմատ կը ծրագրեմ օրս: Անկարևոր բաները կը պակսեցնեմ, որպէսզի կարենամ կարևորներուն հասնիլ: Ճիշդ հոս է, որ պէտք է կենսամ և լուրջ մտածեմ. այն ժամը որ կուգեմ անցնել Յիսուսի հետ կարևոր է կամ ոչ այնքան:

Ա՛խ որքան «բարեգութ ու ողորմած է մեր Տէրը, երկայնամիտ ու առատ ողորմութիւնով...Անիկա մեր մեղքերուն համեմատ չըրաւ մեզի, ու մեր անօրէնութիւններուն համեմատ հատուցում չըրաւ մեզի» (Սաղմ. 103:8,10):

Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, եթէ Աստուած մեզ հետ այնպէս վարուէր ինչպէս որ մենք Իր հետ կը վարուինք, խօսէր միայն այնքան որ մենք Իր հետ կը խօսինք, լսէր միայն այնքան որ մենք Իրեն կը լսենք, քալէր միայն այնքան տեղ որ մենք Իր հետ կը քալենք: Հաւատա որ մենք շատ խղճալի անձեր պիտի ըլլայինք: Բայց փառք Աստուծոյ Իր ողորմութեան, սիրոյն, համբերութեան և շնորհքին համար:

Ինչո՞ւ մտերմանանք Անոր հետ:

1. Որովհետև Ան վստահելի է:

Ունեցած ես ընկեր մը որ վստահելի է. ես ունեցած եմ: Երբ միասին բան մը կը ծրագրենք ու ինք պարտականութիւն մը կը ստանձնէ, ալ ես պէտք չունիմ մտածելու այդ ուղղութեամբ: Գիտեմ որ իմ ընկերս եթէ ըսէ՝ կ'ընէ: Ան վստահելի է: Ինչ լաւ յատկութիւն է այս: Աստուած ալ վստահելի է: Ան վստահելի է մեղքերս ցուցնելու, Փրկիչը դրկելու, զիս փրկելու: Ան բնաւ սուտ չխօսիր, ինչ որ կ'ըսէ՝ կ'ընէ:

2. Որովհետև Ան միշտ ներկայ է:

Մտերիմ ընկերներ կեանքի պարագաներու պատճառով կրնան իրարմէ հեռանալ, սակայն Աստուած բնաւ չհեռանար: Ան եղբօրմէ մը աւելի մօտ է: Ան միայն աղօթքի մը չափ հեռու է: Երբ ամէնը կը հեռանան՝ Ան կը մօտենայ, երբ ամէնը կը կորսուին՝ Ան հոն է:

3. Որովհետև Անոր բարեկամութիւնը ամենէն լաւն է:

Քոյր մը կրնայ քեզի հետ լալ, սակայն Յիսուս քու արցունքներդ կը սրբէ: Քոյր մը կրնայ քեզի հետ աղօթել, սակայն Յիսուս քու աղօթքներդ կը պատասխանէ: Քոյր մը կրնայ փոթորիկին մէջ քու հետդ ըլլալ, սակայն Յիսուս քու փոթորիկդ կը հանդարտեցնէ: Քոյր մը կրնայ նոյնիսկ քեզի համար մեռնիլ, սակայն Յիսուս քեզի համար յարութիւն առաւ: Իրմէ աւելի լաւ ընկեր չկայ:

Միրելի՛ս. եկուր ուխտենք շտկել մեր ընթացքը: Եկուր այսօրուրնէ սկսեալ արժէքաւորենք մեր «Յաւիտեան մտերիմ ընկեր»-ը Անոր հետ խօսելով, Անոր լսելով և Անոր հետ քալելով:

ԱՂՕԹՔ. Տէր Յիսուս, կ'ուզեմ որ դուն ըլլաս իմ «Յաւիտեան մտերիմ ընկեր»-ս: Օգնէ ինձի որ ամէն օր հետդ առանձնանամ ու օրէ օր հետդ աւելի մտերմանամ: Շնորհակալ եմ Յիսուս, որ դուն եղբօրմէն աւելի մտերիմ բարեկամ մըն ես:

Միւզան Խաչոյեան



Յարատևութիւն - մաս 5

Ունեցի՛ր յաւիտենականութեան հեռանկար

«Վասն զի պէտք է ձեզի համբերութիւն, որպէսզի Աստուծոյ կամքը ընելով՝ խոստումը վայելէք» (Եբր. 10:36):

Աստուածաշունչը մեզի շատ մեծ խոստումներ կուտայ, որոնց խարիսխներ կոչած էի իմ նախորդ յօդուածներուս մէջ: Այս խոստումները մեզի կը տրուին, որպէսզի մեզ օգնեն յարատևելու մեր քրիստոնէական կեանքին մէջ: Ես ասոնցմէ մի քանի հատը նշած էի՝ Աստուծոյ սէրը Քրիստոսով մեզի հանդէպ, Անոր հետևելու վարձատրութիւնները, Աստուծոյ հաւատարմութիւնը, Քրիստոսը՝ մեր հաւատքի առաջնորդը և մեղքի վրայ յաղթութիւնը: Բայց ատեններ այս մեծ խոստումները շատ հեռու կը թուան մեզմէ, կարծես թէ Աստուծոյ սէրը անցեալի մէջ եղած բան ըլլար, Քրիստոսին

հետևելու գինը շատ սուղ թուացող բան ըլլար, Աստուած մեզի մոռցած ըլլար, կարծես Յիսուս մեզ չի հասկնար, և կարծես մեզն է որ մեզ կը տիրապետէ:

Յոբը իրեն այսպիսի վիճակի մը մէջ գտաւ: Ան ամէն ինչ կորսնցուցած էր՝ ընտանիքը, ունեցուածքը և առողջութիւնը: Իրեն մնացած էր ընդամենը մի քանի ընկերներ, որոնք այդքան ալ մխիթարութիւն չէին իրեն: Վերջապարտութեան, երբ Աստուած ալ լուռ էր, Յոբին մնացեր էր միայն յաւիտենականութեան խոստումը, յարութիւնը և Աստուծոյ դատաստանը: Այս յուսահատութեան մէջ իր միակ ընկերու բանն այն էր, որ յաւիտենականութեան խոստումն էր կառչէր (Յոբ 19:25-27):

Յաւիտենականութեան խոստումը թէ՛ մեզ այս ներկայ կեանքէն կը քաշէ, որ մեր աչքերը ուղղենք յաւիտենականութեան և թէ՛ ալ մեզ կ'ոգեշնչէ ներկան ապրելու յաւիտենականութեան համար:

Այն գիտակցութիւնը որ այս կեանքը պիտի անցնի երթայ, և որ արդարութիւն կայ մահէն ետք, մեզի աւելի կ'օգնէ որ մեր այս կեանքի տառապանքները աւելի դիւրութեամբ կրենք: Յաւիտենականութեան լոյսի տակ՝ Յոբը կրցաւ կողմնորոշուիլ իր անյոյս վիճակին մէջ, մարտիրոսներ կրցան յարատեւել դժուարութիւններուն և տառապանքներուն մէջ, հաւատացեալներ մխիթարութիւն գտան սիրելիի մը մահուան առիթով, և հարստահարուածներ յոյս գտան անարդարութիւններուն մէջ:

Բայց յաւիտենականութեանը խոստումը չի նշանակեր ետ քաշուիլ ներկայ կեանքի մարտահրաւերներէն ու անոր դժուարութիւններէն: Հակառակը, ան մեզ կ'ոգեշնչէ, որ մենք մտնենք այս կեանքի ամէնօրեայ պայքարին մէջ՝ մերը և ուրիշինը: Իր ամէն ուրախութիւնովը և ցաւովը, գեղեցկութիւնովն ու տգեղութիւնովը, յոյսովն ու յուսախաբութիւնովը: Այն մեզի կը զինէ որ դիմագրաւենք ու փոխենք աշխարհը: Յաւիտենականութեանը խոստումը մեզ վտանգներ դիմագրաւող քաջ հաւատացեալներ կը դարձնէ՝ մեզ ազատելով մահուան վախէն, ցախի և մերժումի զգացումէն, փնտռելու արդարութիւնը, ազգեր փոխելու և հաւատալու Աստուծոյ հրաշքներուն:

Երբ մենք հաւատքի, յոյսի ու սիրոյ մէջ կը յարատենենք, մենք պիտի «ժառանգենք խոստումը» (Եբր. 6:10-12, 10:35-39): Յարատեւելու համար աւելի զօրեղ ի՞նչ պատճառ գոյութիւն ունի քան յաւիտենականութեանը խոստումը:

Տօք. Արմէն Կազաւեան

Հարցազրոյց հովիւ՝ Հրաչ Յակոբեան եղբօր հետ

- Ո՞ր երկրէն էք:
- Ծնած եմ Թէրան, այժմ կը բնակիմ Ամերիկայի մէջ:

- Ե՞րբ էր առաջին անգամ Հայաստան այցելեցիք և այս ձեր քանի՞ երրորդ այցելութիւնն է:
- Առաջին անգամ այցելեցի հայրենիք 1994 թուականին և այս արդէն մօտաւորապէս 45-րդ այցելութիւնս է:

- Հոգևորապէս ինչպէ՞ս կը տեսնեք այսօր ժողովուրդին վիճակը:
- Ինիսունական թուականներուն երբ առաջին անգամ այցելեցի հայրենիք, տեսայ որ ժողովուրդը շատ բան չէր գիտեր Աստուծոյ մասին, Աստուածաշունչի ուսուցումէն շատեր անտեղեակ էին: Այսօր հոգևոր գիտութիւն կայ ժողովուրդին մէջ, սակայն հետաքրքրութիւնը պակասած է Աստուծոյ նկատմամբ: Առաջ մարդիկ անհամբեր կը սպասէին ու կ'ուզէին լսել Աստուծոյ մասին, սակայն հիմա մարդոց սրտերուն մէջ Աստուծոյ փնտռելու փափաքը պակսեր է: Աւերիչ երկրաշարժը, Արցախի պատերազմը և երկրի համընդհանուր դրութիւնը մարդկանց մէջ արթնցուցեր էր Աստուծոյ փնտռելու տենչը և շատեր այդ տարիներուն Քրիստոսին գտան, իսկ այժմ այսպիսի արտաքին նեղութիւններ չկան, համեմատաբար աւելի բարեկեցիկ կեանք ունին, սակայն Աստուծոյ մասին հետաքրքրութիւնը նուազած է:

- Ձեր ծառայութիւնը ի՞նչ է հայրենիքին մէջ:
- Ես AGM-ի (Armenian Gospel Mission) աշխատակից եմ: Հայաստանի մէջ մեր կազմակերպութիւնը կը գործէ ARDA (Armenian Relief & Development Association) անունով: Բարեգործական բնոյթ ունի մեր ծառայութիւնը՝ օգնել Հայաստանի ամենաաղքատ խաւի ժողովուրդին ապահովելով անոնց սնունդով, հագուստով, դեղորայքով, հիկիտենիկ պարագաներով և անվճար բժշկական օգնութիւն տրամադրելով, և այս նպատակաւ Կիւմրիի (Լենինական) մէջ հիմնեցինք մեր գլինիքան, որը պատրաստ է սպասարկելու աղքատ ժողովուրդին: Ինչպէս նաև մանկապարտէզներ հովանաւորել, տուներու շինարարութիւն և այլ ծրագիրներ: Նաև մեծ շեշտ կը դնենք օգնելու տեղական քրիստոնէայ խումբերուն՝ իրենց գործը առաջ տանելու համար:



- Ի՞նչ տեսիլք ունիք Հայաստանի համար:
- Մեր տեսիլքն է գալիք հինգ տարուայ մէջ ստեղծել կենդրոն մը, ուր կը պատրաստուին ու գործի կը մղուին քրիստոնէայ բարեպաշտ գործատէրեր, որոնք կենդրոն յաճախելով և գանազան արհեստներ սորվելով գործի ասպարէզին կը մղուին որպէս՝ օգտակար, բարեպաշտ և արհեստի տէր մարդիկ գործելու և իրենց ապրուստը իրենց ձեռքերով վաստակելու համար:

- Հոգևորապէս ո՞րն է կարևորագոյն պէտքը այսօրուայ համար մեր ժողովուրդին:

- Մերտէլ և հասկնալ Աստուծոյ Խօսքը ճիշտ ձևով և գործադրել այն իրենց անձնական ամէնօրեայ կեանքին մէջ:

- Ինչքանո՞վ ընդունակ է մեր ժողովուրդը Աստուծոյ Խօսքին այսօր:

- Ժողովուրդի ուշադրութիւնը այժմ աւելի կենդրոնացած է նիւթականի վրայ քան հոգևորի, կարծես թէ իրենց համար երկրորդական դարձած ըլլայ ամէն ինչ որ հոգևոր է, մարդիկ հոգսերով են հիմա, աւելի հանգիստ պարագաներու տակ կ'ուզեն Աստուած պաշտել: Ի հարկէ խօսքս բոլորին չի վերաբերէր, շատեր կան որ իսկապէս Աստուած կը պաշտեն իրենց գտնուած վիճակին մէջ:

- Ի՞նչ քաջալերական խօսք ունիք մեր ժողովուրդին համար:

- Աստուածաշունչը կ'ըսէ թէ ան որ Աստուծոյ վտահի երբեք ամօթով պիտի չմնայ: Մենք չենք գիտեր թէ մեր կեանքը մէկ տարի յետոյ, մէկ ամիս յետոյ ինչ պիտի ըլլայ, բայց Աստուած գիտէ: Ուստի իմ խօսքս է որ ամէն մէկ անհատ, իրապէս որոշէ և կամք ընէ իր կեանքի մնացած օրերը ապրիլ Տէրոջ փառքին համար և ինք հնազանդ գտնուի Տէրոջը ուր որ առաջնորդէ զինք, որովհետև այդ ժամանակ իմաստալի կեանք պիտի ունենայ իր կեանքը:

Հարցազրոյցը վարեց՝
Վարդան Սարգիսեանը

